ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 4 ” հոկտեմբերի 2012թ

№ 122-Ա

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ, ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի <<Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող եվ շահագրգիռ մարմինների համագործակցության մեխանիզմները և համակարգման ընթացակարգերը հաստատելու մասին>> N 1138-Ն որոշմամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012թվականի սեպտեմբերի 26-ի ՈԴԴ/04/9325-12 գրությամբ ներկայացված պահանջների, **որոշում եմ՝**

1.Հաստատել՝

1) միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման մարզային միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) միջոլորտային հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

3) համակարգող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 4
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012 թվականի հոկտեմբերի 4-ի
N 122-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	**Միջոցառում**	**Պատասխանատու կատարող**	**Ժամանակացույց**
1.	«Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների>> ներդրման և միջոլորտային կառավարման նպատակով ՀՀ Սյունիքի մարզում ստեղծոլ մշտական գործող միջոլորտային հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի գործունեության և Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի հետ փոխգործակցության կարգը:	Մարզպետ	2012 թվական
2.	Մարզում նշանակել Միջազգային առողջապահական կանոնների հարցերով պատասխանատու:	Մարզպետ	2012թ.
3.	Ներդնել կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոններով պայմանավորված, այդ թվում՝ սննդի անվտանգությանն առնչվող դեպք արձանագրելիս Միջազգային առողջապահական կանոնների հարցերով պատասխանատուին հաղորդման ընթացակարգ:	Մարզպետ	2012թ.
4.	Իրականացնել <<Միջազգային առողջապահական կանոնների տեսակետից մարզպետարանի կողմից ընդունված իրավական ակտերի պարբերական գնահատում և, անհրաժեշտության դեպքում, վերանայում և լրամշակում:	Մարզպետ	Պարբերաբար
	Մշակել ՝ <<Միջազգային առողջապահական	Միջոլորտային	2012թ.

5.	/բժշկասանիտարական/ կանոնների>> վերաբերյալ իրազեկման ծրագիր-ժամանակացույց մարզում գործող կառույցների համար:	հանձնաժողով	.
6.	Մարզային ենթակայության բուժկանխարգելիչ կազմակերպություններում ներդնել վարակիչ հիվանդությունների, թունավորումների, ճառագայթային ախտահարումների կանխարգելման վերաբերյալ Ազգային համակարգող մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացված իրավական ակտերը, մեթոդական փաստաթղթերը, շրջաբերական նամակները:	Միջոլորտային հանձնաժողով	Պարբերաբար
7.	Ներդնել Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացված Կանոններում ամրագրված սխեմաների կիրառումը:	Միջոլորտային հանձնաժողով	2012 թվական
8.	Մարզում ստեղծել էլեկտրոնային ռեեստր՝ հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի համար ՝ համաձայն Ազգային հաակարգող մարմնի կողմից ներկայացված օրինակելի ձևաչափի /Հավելված 2/ և ներկայացնել այն մարզային ենթակայության բուժկանխարգելիչ հաստատություններին:	Միջոլորտային հանձնաժողով	2012 թվական
9.	Կազմակերպել և իրականացնել բազմոլորտ վարժանքներ՝ կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների (այդ թվում՝ և միջազգային նշանակության) առաջացման սցենարով:	Մարզպետ	2012-2013 թվականներ
10.	Մշակել և ներդնել մարզի տարածքում գործող բուժկանխարգելիչ կազմակերպությունների, լաբորատորիաների, կլինիկաների ռեգիստր՝ համաձայն Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացված ձևաչափի և ռեգիստրում գրանցված հիմնարկների վերանայված ցանկը և կոնտակտային տվյալները մինչև յուրաքանչյուր	Միջոլորտային հանձնաժողով	2012 թվական

	տարվա հունվարի 15-ը ներկայացնել Ազգային համակարգող մարմնին՝ /Հավելված 3./		
11.	Մշակել և ներդնել համաճարակների պատրաստվածության ընդհանուր ծրագիր՝ Ազգային համակարգող մարմնի կողմից սահմանված կարգով հաստատված ազգային ծրագրի հիման վրա:	Միջոլորտային հանձնաժողով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակայի ն տեսչության մարզային կենտրոն Գյուղատնտեսության նախարարության <<Սննդամթերքի անվտանգության>> պետական ծառայության տարածքային կառույցներ	2012 թ.
12.	Մարզի տարածքում գործող Մեղրու սահմանային անցման կետում գործող սանիտարակարանտինային կետի հետ համագործակցված կազմել մարզի այն բուժկանխարգելիչ կազմակերպությունների ցանկը, ուր պետք է տեղափոխվի սահմանում հայտնաբերված հիվանդը:	Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակայի ն տեսչության տարածքային մարմին, << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	2012 թվական
13.	Մշակել կենսաբանական քիմիական, վտանգների ժամանակ հանրային առողջապահության ոլորտում գործելակերպի	Միջոլորտային հանձնաժողով, << Սյունիքի	2012 թվական

	ծրագիր՝ վերջինս ընդգրկելով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ծրագրի մեջ:	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ԱԻՆ Սյունիքի մարզային կենտրոն, ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Սյունիքի մարզային կենտրոն	

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012 թվականի հոկտեմբերի 4-ի
N 122-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են միջոլորտային հանձնաժողովի նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները, այսինքն՝ աշխատակարգը, ինչպես նաև Կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի (այսուհետև՝ Ազգային համակարգող մարմին) հետ փոխգործակցության կարգը:

II. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Միջոլորտային հանձնաժողովի նպատակը ՀՀ Սյունիքի մարզում Կանոնների ներդրման գործընթացի ապահովման համար Կանոնների ներդրման քաղաքականությանը, ներդրման ռազմավարությանն ու միջոցառումներին, ինչպես նաև բնագավառին վերաբերող այլ հարցերի քննարկումն է, ինչպես նաև Կանոնների իրականացման գործընթացում բոլոր շահագրգիռ ոլորտների ներգրավվածության և արձագանքի համակարգումը, գերակա խնդիրների վեր հանումը, հասարակական կազմակերպությունների, մասնավոր սեկտորի հետ համագործակցության համակարգումը, գործընթացի հսկողությունը և համակարգումը:

3. Միջոլորտային հանձնաժողովը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) օժանդակում է մարզում գործող պետական կառավարման մարմինների կողմից Կանոնների ներդրման աշխատանքներին,

2) կազմակերպում է Կանոնների ներդրման հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ.

3) կազմակերպում է Կանոնների ներդրման միջոցառումների վերանայման և լրամշակման աշխատանքները.

4) անհրաժեշտության դեպքում քննարկում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններին առնչվող կառույցների կողմից, իրենց ոլորտներին առնչվող հարցերի շուրջ Կանոնների վերաբերյալ առաջարկությունները՝ Ազգային համակարգող մարմնի քննարկմանը համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

III. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Միջոլորտային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են եռամսյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

5. Միջոլորտային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը կարող է լինել 5, առավելագույնը՝ 15:

6. Միջոլորտային հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է: Միջոլորտային հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

7. Միջոլորտային հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

8. Միջոլորտային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում առանձին խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խումբ (խմբեր)՝ ներգրավելով համապատասխան մասնագետների, նրանց տալ հանձնարարականներ: Աշխատանքային խմբերը ստեղծվում են մարզպետի որոշմամբ: Աշխատանքային խումբը (խմբերը) կատարած աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացնում (են ներկայացնում) հանձնաժողովին:

IV. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

9. Միջոլորտային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներով:

10. Միջոլորտային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

V. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Միջոլորտային հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը:

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) Միջոլորտային հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

5) հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

VI. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

13. Միջոլորտային հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և, անհրաժեշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ:

2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.

3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները՝ ճառագայթային, քիմիական և կենսաբանական վտանգների և դրանց դիմակայման հարցերի վերաբերյալ:

4) Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը:

VII. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Միջոլորտային հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը

2) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում է հանձնաժողովի անդամների դիտողությունների և առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.

4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

5) հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փախարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VIII. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը դադարում է մարզպետի/քաղաքապետի որոշմամբ:

IX. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

16. Կանոնների կիրառման հարցերով մշտական գործող մարզային միջոլորտային հանձնաժողովը և Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմինը (այսուհետ՝ Ազգային համակարգող մարմին) Հայաստանի

Հանրապետությունում Կանոնների ներդրման նպատակով մշակում և իրականացնում են համապատասխան քաղաքականություն:

17. Կանոնների իրականացման գործընթացում շահագրգիռ ոլորտների փոխգործակցության համակարգման և Կանոնների ներդրման հետ կապված այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք ունեն միջգերատեսչական համակարգման խնդիր, կամ առկա են տարաձայնություններ առանձին գերատեսչությունների հետ, վերջնական որոշում կայացնելու համար կողմնորոշվելու նպատակով, միջգերատեսչական հանձնաժողովը կարող է դիմել Ազգային համակարգող մարմնին կամ ազգային մակարդակում գործող միջգերատեսչական հանձնաժողովին:

1) Մարզի տարածքում գործող պետական կառավարման մարմինների կողմից Կանոնների ներդրման աշխատանքների հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում, խնդիրների պարզաբանման, լուծման նպատակով.

2) Մարզում Կանոնների ներդրման հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ կազմակերպելու առաջարկով.

3) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով մշակված և շրջանառության մեջ դրված նախագծերի և նախագծերի վերաբերյալ մարզպետարանի կամ մարզային նշանակության կառույցների ներկայացված դիրքորոշումները քննարկելու և Ազգային համակարգող մարմնին ներկայացնելու նպատակահարմարության նպատակով.

4) Կանոնների ներդրման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների վերանայման և լրամշակման առաջարկություններ ներկայացնելու համար.

18. Միջոլորտային հանձնաժողովն իր նիստերի արձանագրությունները տարվա վերջում, մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը, ներկայացնում է Ազգային համակարգող մարմնին:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012 թվականի հոկտեմբերի 4-ի
N 122-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արա Դոլունց- ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /հանձնաժողովի /Նախագահ/

Լենա Մալինցյան- ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Սյունիքի մարզային կենտրոնի պետ /հանձնաժողովի քարտուղար/ /համաձայնությամբ/

Աշոտ Ծատրյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Արշակ Ուստաբաշյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Սամվել Թանգյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Արթուր Հարությունյան – ՀՀ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ գնդապետ /համաձայնությամբ/

Արթուր Աթայան - Կապանի քաղաքային համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Նելսոն Ոսկանյան - Գորիսի քաղաքային համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Աղասի Հակոբջանյան - Սիսիանի քաղաքային համայնքի ղեկավար

/համաձայնությամբ/

Վարդան Գևորգյան - Քաջարանի քաղաքային համայնքի ղեկավար
/համաձայնությամբ/

Սերգեյ Հայրապետյան - Մեղրի քաղաքային համայնքի ղեկավար
/համաձայնությամբ/

Մխիթար Զաքարյան- Ագարակ քաղաքային համայնքի ղեկավար
/համաձայնությամբ/

Լևոն Պետրոսյան - ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանակ տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ
/համաձայնությամբ/

Արամ Գրիգորյան - ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման տեսչության հարավային ջրավազանի տարածքային կառավարման բաժնի պետ
/համաձայնությամբ/

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան